*ՀՀ շրջակա միջավայրի նախարարության*
*գլխավոր քարտուղար Գ. Գուլյանին*

*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*
*2023 թվականի ապրիլի 3-7-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման վերաբերյալ*

*Գործուղվող անձ*
*Իրավախորհրդատու Մարի Չաքրյան*

*Երկիր/քաղաք/ժամկետ*
*Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2023 թվականի ապրիլի 3-ից 7-ը*

*Հրավիրող կողմ*
*ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական բաժին, «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի քարտուղարություն:*

*Նպատակը*
*Մասնակցել Արդարադատության մատչելիության աշխատանքային խմբի 15-րդ հանդիպմանը:*

*Մասնակիցների շրջանակ*
*Աշխատանքային խմբի անդամներ, ՄԱԿ ԵՏՀ և այլ հարակից համաձայնագրերի քարտուղարությունների ներկայացուցիչներ, դատավորներ, դիտորդներ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս «Էկո ֆորում» ցանցի անդամների:*
*Հայաստանից հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռուզաննա Ազրոյանն, ով մասնակցել էր նաև միջոցառմանը նախորդող Դատական կոլոկվիումին, հասարակական սեկտորից՝ «Դալմա-Սոնա» հիմնադրամի նախագահ Ռուզաննա Ղազարանը:*

*Օրակարգում.*
- ✓ *1. Արդարադատության մատչելիությունը կլիմայի փոփոխությանը, 2. կենսաբազմազանությանը և 3. էներգետիկային վերաբերող գործերում,*
- ✓ *4. Զարգացումներ և լավագույն փորձի փոխանակում,*
- ✓ *5. Արդարադատության արդյունավետ մատչելիություն ապահովելու գործիքակազմ,*
- ✓ *6. Այլ հարցեր:*

*Ելույթներ*

*Կոնվենցիայի քարտուղարության առաջարկով Արդարադատության արդյունավետ հասանելիության խթանման գործիքներին վերաբերող 5-րդ կետի ներքո ներկայացնել արդարադատության մատչելիության հարցերի շուրջ ազգային երկխոսությանն աջակցելու Հայաստանի փորձը:*

*Տեղեկացնեմ, որ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով Արդարադատության նախարարին ուղղված գրություն եմ պատրաստել նախապես, սակայն տեղեկատվությունը տրամադրվել է միայն ապրիլի 6-ին: Ուստի ստիպված եմ եղել հիմնվել Արդարադատության ոլորտի ռազմավարական ծրագրի, ինչպես նաև ակտիվ տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից ձեռքբերված տեղեկության վրա:*

*Ելույթի տեքստը և տեսասահիկը կցվում է (անգլերեն տարբերակ):*

*Արդյունքներ*

*Աշխատանքային խումբը որոշվեց,*

- ✓ *ի գիտություն ընդունելով մի քանի Կողմերի ներկայացրած նախաձեռնություններն ու մարտահրավերները՝ առաջարկել կոնվենցիայի Կողմերին կլիմային վերաբերող օրենսդրության մեջ ներառել հասարակության համար արդարադատության մատչելիության ապահովման այնպիսի դրույթներ, որոնք կապահովեն նրանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վիճարկել կլիմայի գործողությունների ծրագրերը,*
- ✓ *կոչ անել Կողմերին ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ լուծելու կենսաբազմազանության պաշտպանության ոլորտում արդարադատության մատչելիության առկա խոչընդոտները, որոնք վերաբերում են օրինակ, դատարանների իրավասությանը, գործերի անդրսահմանային համատեքստին, ծախսերին, դատավարական կարգին, ժամկետներին, պատասխանատվությանը շրջակա միջավայրի վրա ազդեցության անորակ գնահատման համար և այլն:*
- ✓ *Կողմերին և համապատասխան միջազգային կազմակերպություններին ու մարմիններին կոչ անել դատապարտել Ռուսաստանի Դաշնության ագրեսիան Ուկրաինայի դեմ և ցանկացած հնարավոր օգնություն ցուցաբերել Ուկրաինային բնապահպանական մարտահրավերները հաղթահարելու համար,*
- ✓ *Կողմերին կոչ անել շարունակելու վարչական և դատական վերանայման ընթացակարգերի և դատարանների և վերանայման այլ մարմինների որոշումների հասանելիության և արդյունավետ առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման բարելավումը՝ ի նպաստ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի կատարման, այդ նպատակով օգտագործելով նաև էլեկտրոնային տեղեկատվական գործիքներ:*

*Պայմանավորվածություններ*

*Օրհուսի կոնվենցիայի քարտուղար Էլլա Բելյարովայի հետ առանձնազրույցում, նա նեղեկացրեց, որ կոնվենցիայի Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին արձանագրությանն ուղղված քայլերում Հայաստանին աջակցելու նպատակով հունիսին պայմանագիր կկնքվի համապատասխան փորձագետի հետ: Սակայն դեռևս սպասում են այս համագործակցության անհրաժեշտության մասին շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական գրությանը:*

*ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռուզաննա Ազրոյանի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ քննարկելու շրջակա միջավայրի պահպանության հարցերով արդարադատության մատչելիության և հատկապես դատավորների իրազեկման հարցերը: Վերջինս առաջարկել է դատավորների համար դասընթաց կազմակերպել կոնվենցիայի և հատկապես բնապահպանության ոլորտում արդարադատության հարցերով:*

*Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝*
*Մարի Չաքրյան*
*18.04.2023*